½Ñ á ÿÓÙØÝ½ØŠ½#Ø–Ø Îÿ³û ŠØÑ#╢ ßÑ ÎÓÿÑ#Ã|#
ÃÃ/Æ1#Šå"Œ Ú/# ÉŽ℗Œ ÚœÕ#26/#70åœ#Ÿ Œ åþ#
Ã¹À1#89#86#93/Æ:ļ. hwugŁ foi@foi.am, www.foi.am#
IUHHGRP #R I#Q IRUP DWIRQ#FHQWHU#QJR#
# #

#

11.01.2016թ.
266-ի 2

ՀՀ առողջապահության նախարար
պարոն Արմեն Մուրադյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մուրադյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. ՀՀ առողջապահության նախարարության ենթակայության տակ գտնվող կենսաչափական կամ հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ մշակող կառույցները ներկայացրե՞լ են արդյոք “Անձնական տվյալների պաշտպանության” մասին ՀՀ օրենքով նախատեսված պարտադիր ծանուցումը (օրենքի 23-րդ հոդված եւ 29-րդ հոդվածի 2-րդ մաս),
2. Խնդրում ենք տրամադրել “Անձնական տվյալների պաշտպանության” մասին ՀՀ օրենքով նախատեսված պարտադիր ծանուցումն ուղարկած կառույցների ցանկը:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ նախագահ Լիանա Դոյդոյան